բժիշկներին, որոնք կէս տարի առաջ յաջող անդամահատութիւն կատարելով նպաստեցին նորա առողջութեան վերականգնելուն, նախաձաշի հրաւիրել, և կատարեց խոստումը. Այդպիսով առաջին անգամ իւր իշխանութեան օրով նա կողմնակի անձանց հացի էր հրաւիրում. Բայց ընդունուած սովորութեան համեմատ հրաւիրեալները առանձին սեղան պէտք է նստէին, իսկ պապի սեղանը բաժանուած էր վարագոյրով. Վատիկանում վերջերս պապի հրամանով պաշտօնեաների մեծ փոփոխութիւններ են եղել.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը յուլիս 16-ին կրկին անգամ ուղևորուեց դէպի Հաղարծին, Երևանի վրայով, կառքով. Նորին Վեհափառութեան ուղեկցում էին Գեր. Մաղաքիա եպիսկոպոս, Մ. Աթոռի տպարանի տեսուչ և ձեմարանի ուսուցիչ Բար. Եղնիկ վարդապետ և Շնորհ. Ամբատ սարկաւագ. Այլ և Պարիզում Վեհ. Հայրապետի խնամքը, մեծ յաջողութեամբ նկարչութիւն ուսանող պ. Թերլեմեղեան, որի մի նկարը այս տարի ցուցահանդէսում մրցանակի է արժանացել*. Նորին Սրբութիւնն, առանց երկար կանգ առնելու Երևանում, նոյն օրն և եթ շարունակեց ճանապարհը և Եկենովկայում պ. Եարալեանի հիւրամեծար տանը դիշերելով, յաջորդ առաւօտ Սևան անցաւ. Այդտեղ երկու օր մնալուց յետոյ 19-ին մեկնեց դէպի Դիլիջան, ուր բաժանուեցան Տ. Եղնիկ վարդապետ, մի քանի շաբաթով իւր հայրենի Շուշի քաղաքը գնալու համար, և Շնորհ. Ամբատ սարկաւագ, որ պէտք է շարունակէ ուսումը Ս. Պետերբուրգի համալսարանում. Ապա նոյն օրը երեկոյեան դէմ Վեհ. Հայրապետը միւս ուղեկիցների հետ Հաղարծին գնաց. Այս վանքից Նորին Սրբութիւնը ելաւ շաբաթ օր յուլիս 21-ին և, Մեծ Վարքիլիսայում դիշերելով, յաջորդ առաւօտ շոգեկառքով Աղէքսանդրապոլ հասաւ, ուր գանուում էր նաև կարճ միջոցաւ այցելութիւն եկած Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ Գեր. Սուքիաս արքեպիսկոպոսը. Յաջորդ օրը Նորին Վեհափառութիւնը նախկին ուղեկիցների հետ կէս կառքով, կէս ձիով Հառիճու վանքը գնաց, ուր չորս օր անցրեց. Այստեղ Վեհափառ Հայրապետի ուղեկիցների թուում աւելացաւ նաև ձեմարանի տեսչի օգնական և ուսուցիչ Տ. Յուսիկ վարդապետ, որ Հառիճ ամարանոց ուղարկուած աշակերտներին վերահսկում էր և մի քանի օրով առանձին յանձնարարութեամբ Տփխիս էր գնացել. Ուրբաթ, յուլիս 27-ին Նորին Վեհափառութիւնը մեկնեց Հառիճից և, Բաշ—Արարանում դիշերելով, յաջորդ օրը երեկոյեան ուշ Մ. Աթոռ ժամանեց.

Նորին Սրբութիւնը օգոստոս 7-ին նորից դէպի Հաղարծին ուղևորուեց, այս անգամ ձիով, Բջնու վերայից՝ դիւանապետ Տ. Կորիւն վարդապետի ուղեկցութեամբ.

Այս ժամանակամիջոցում Վեհափառ Հայրապետը բարեհաճեալ է մի անգամ ևս երկու օրով Բիւրականի ամարանոցը գնալ համգստանալու.

Մ. Աթոռ վերադարձաւ մի քանի շաբաթ Ս. Գեղարդի վանքում մնալուց յետոյ Մինոզի անդամ բարձր. Մխիթար վարդապետ, որից յետոյ կարճ ժամանակ ևս Սինոզի անդամ Գեր. Յուսիկ եպիսկոպոսն անցրեց նոյն վանքում և վերադարձաւ.

Մ. Աթոռ է եկել Տ. Մեսրոպ վարդապետ, որ անցեալ ձմեռ Ս. Պետերբուրգում յաջողութեամբ մագիստրանտի քննութիւն բռնեց և այժմ դրաղուած է Մ. Աթոռի մատենադարանի ձեռագիր Աստուածաշունչների ուսումն

---

* Պ. Թերլեմեղեանից առաջ Մ. Աթոռ եկել էր և ամիսուկէս մնաց յայտնի նկարիչ պ. Ֆեթֆաեան, որ Նորին Վեհափառութեան յանձնարարութեամբ երեք ընդօրինակութիւններ առաւ անուանի նկարիչների գործերից.

նախարարութեամբ, մտադիր լինելով այդ նիւթի մասին շարադրութիւն ներկայացնել մագիստրոսի աստիճան ձեռք բերելու համար։

Եկան Մ. Աթոռ նաև Տ. Գեղամ և Տ. Խոսրով վարդապետները։

Շուշու թեմ. դպրանոցի տեսուչ Տ. Բենիկ վարդապետ մի քանի օրով Մ. Աթոռ այցելելուց յետոյ վերադարձաւ իւր պաշտօնատեղին։

Ուսանող Պօղոս և Կոստանդին սարկաւագները, Վեհափառ Հայրապետից հրաման ստանալով գնալ շարունակելու իրենց ուսումը՝ ուղևորուեցան դէպի Մոսկուա. շնորհ. Պօղոս սարկաւագ համալսարանի լեզուաբանական բաժինը մտնելու համար, իբրև իսկական ուսանող, իսկ շնորհ. Կոստանդին սարկաւագ մըտնելու համար գիւղատնտեսական ինստիտուտը։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Ինչպէս «Արարատ» ի նախընթաց համարում տեղեկացրել էինք՝ առաջիկայ ուսումն. տարուայ համար Վեհափառ Հայրապետի հրամանով ճեմարան պէտք է ընդունուեն 6 աշակերտ Շամախւոյ թեմից և 3 կամ 4 աշակերտ Աստրախանի թեմից՝ վիճակային արդիւնքների հաշուին. մի քանի հոգի ևս հեռաւոր տեղերից են ընդունուած, այնպէս որ ոչ մի աշակերտի համար բաց տեղ չէ մնում այլ ևս։

Ճեմարանի շինուածքների վերայ ընդարձակ նորոգութիւններ են լինում և պէտք է փոխուին բուն շինուածքի բոլոր լուսամուտները, որոնք իրենց անյարմար ձևով մեծապէս վնասում էին աշակերտների առողջութեանը։ Վեհափառ Հայրապետի հրամանով այս բոլորովին անհրաժեշտ դարձած նորոգութեանց համար ծախսուում են ճեմարանի բացման քան և հինգամեակի առթիւ նուէր ստացած դրամները։ Արդէն սկսուած է նոր հիւանդանոցի շինութիւնը, որի համար 4000 ր. են նուիրել Բագուի յայտնի վաճառական Թումայեան եղբայրները։

ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

Աշխարհը լի է հակասութիւններով. բայց դժուար թէ որ և է տեղ հակասութիւնների այնպիսի ազատ ասպարէզ գտնուի, որպիսին մեր —·—·—· մամուլն է ներկայացնում։ Մենք կամենում ենք ուշադրութիւն հրաւիրել յատկապէս այն ծայրահեղ հակասութեան վերայ, որ երևում է այստեղ պարբերաբար եկեղեցւոյ և հոգևորականութեան նկատմամբ յայտնած կարծիքների ու ցանկութիւնների—և դրած պահանջների մէջ։ Բերենք մի փոքրիկ նմուշ «Մուրճ» ամսագրի վերջին յուլիս համարից՝ մի անմեղ մատենախօսական ակնարկ պ. Ս. Մանդինեանի թարգմանութեամբ Մ. Աթոռի տպարանում այս տարի լոյս տեսած «Փարպեցի քարոզներ»-ի մասին։ Այդ մատենախօսութեան հեղինակ Լ.—Լէօն ինչպէս «Մշակ»-ի, այնպէս և «Մուրճ»-ի խմբագրութեան անդամ է՝ ամենաբեղուն գրիչը երկու թերթերի համար ևս. ուստի ներկայումս Կովկասի Հայոց մէջ ոչ մի հրապարակախօսի մտքեր այնչափ ընդարձակ չափով չեն տարածուում և, պէտք է ենթադրել, ազդեցութիւն գործում որչափ նորանը։ Ինչպէս ուրիշներն արդէն նկատել են, զուր տեղը չէ նա «Լէօ—առիւծ» անունը իւր վերայ առել. պատմական Վասակի պէս (ոչ ուրացող, այլ Մամիկոնեան Վասակի), իւր առիւծութեան ամենափայլուն շրջանի մէջ գտնուելով այժմ, կանգնած է նա երկու ոտքով երկու սարերի վերայ, և բացարձակ իշխանու-